77. ՂՈՆԱՂԸ

Մին դո̈նո̈ւմ մին թա̈զա̈ գյա̈լան բեխաբար մարթ ղոնաղ ա ընգնըմ մին տան։

Էտ տանը ինըմ ըն մին մարթ, մին կընեգյ։ Ըտրանք էտ ղոնաղին պագև ըն տամ, ղազ ըն մորթում, տըպակում, փորը խնձո̈րավ լցնըմ, կյինի-արաղ եր տինում, չայ-պեն ածում, տինում ըռաշկեն, վըեններըը լըվանում, բա̈ստա̈միշ անում, լա̈վ փափուկ, թա̈մո̈ւզ, թա̈զա̈, ղարաբաղու վեխճարի պըռթա̈ շուկի յըրղուն-դո̈շա̈կըմ քընցնում։

Քըշերվա կեսին տնատարը եր ա կենում, տո̈ւս կյամ տո̈ռնըր։ Հա̈լա̈ մին երգյինքին եշում ա տըեսնում, պա՛րզ, թա̈զա̈ օթումը էն մոք կյա̈պո̈ւտ երգյինքըմը ասթխերը փըլըստրատին ըն տամ։

Ասըմ ա.— Մա̈սսա̈բըտ ճաքե Ղաբաբաղի երգյի՞նքյ, էտ հի՞նչ ա քու հա̈լըտ, ասիս լհա̈ յըես էլ ինիմ երգյինքա̈ն կախ ընգած, ասիս լհա̈ վըեննեըս տափին չինի՛...— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, փա̈՛, մին տըես էն սարերան հի՞նչ սա̈րին քամի յա կյամ է՛, լոխ ծաղկի վըետ ա՛։

Էտ մարթը համ ասում ա, համ մին լա̈վ սունչ քաշում, վըետ քաշըմ։ Էլ գյուդո̈ւմ չի, վեր էտ վախտը միչև ինքյը տեսա̈վ-տնա̈վ ա ընգալ, ղոնաղը եր ա կացալ նի մտալ ո̈ւրա̈ն կընգանը ծոցը։ Էտ տնատարը իտի մուլի-շուլի ընելավ ետ ա տըեռնում, ծանդըրըմըեծ կյամ աըվարեն ղալին քըշտավ մին պուճուր ռախճա կար, մեչին վարթ, կընանչի, տես-տեն, եշում տեսնում, մին վարթ հենց պը-

ճրղվալ ա, ասիս օղում ա, թա՜ լհա՜ տրաքվի՜, ճաքվի՜, փոլ կյա՜, ուրան ղաշանգյ ինիլավը մարթի հոքի փառավերի՜։

Ասում ա.— Պա՜հ, քու մրեռալը վա՜յ տամ, հալա՜ մին էս քյափուրին եշի է՜, ասիս լհա՜ մին մարալ-չեյրան, մեշկը պերա՜կ ախճիգյ ինի, մին տրես հո՜ւնց ա ըրորվում, վի՜յ աման ա՜, լհա՜ էն երգյինքին, էն պըլպըլալիս աեղը դինչ չի կենող, էն կյապուտ երգյինքըմը լըղլըղալիս, ծրփծրփալիս լուս ասթըխը ինի՜, քրշացած եկած մեր բախչան։

— Հըսս, ուխա՜յ, վրետիտ մատա՜ղ,— ասում ա, պրրծնըմ, մին էլ մին լա՜վ վրետ քաշում, ետ տեռնում տոն։ Էտ վախտը ղոնաղը կընգանը քըշտան տուս ա կյամ, շորերը կյենում, հայդա՜...

Տնատարը ետավ գյուդում ա, ետավ ա կըլխի ընդնըմ, վեր ղոնաղը եկալ ա ուրան կընգանը կոշտը։ Տեռնըմ ա մին օթի-օրփաթ, մին ուրփրթավուր, ուրան մեչին օռած, տրռռոն տեռած։

Առաչ մին լա՜վ կընգանը փըչեչը քանդում ա, բիչերը ծիքյծիքյ անըմ, ետավ եր կենում, լամբը վառում, կընգանը առաչը քըցում, ասում.— Դե հա՜, շուտ ըրա քյինինք, էն ղոնաղին կըլխին տես հալա՜ հի՜նչ ըմ տինելու, կաց հալա՜ մին փրոնիմ, ախցան ըմ ընելու։

Ամմա միչև ուրանց հասնիլը, ղոնաղը հասած ա ինում Արաղին ղրաղը, մրթեն ա ինում, կարմունչը ճարում չի, ամմա ըտրանց փանարին ճրաքյին լուսավը կարմունչը ճարում ա, անց կենում էն մին թարափը։

Էտ տընըտրուչ կընգանը անըմը Հերիքյնաղ ա ինում։ Մարթը տեսնում ա, վեր ղոնաղը կարմունչն անց ա կացալ, հավան նստում ա, կըտաղոթունը անց ա կենում, արխայինանում ա, վեր կրավա-դավա պըրծալ ա, ասում ա. — Հերիքյնաղ, տեսնաս ղոնաղը մրղանա ռազի քյինի՜ց։

Հերիքյնաղն ասըմ ա.— Բա խե՜ չի ռազի քյինի՜լ...

Աշխանան ղաղը,

Տանան Հերիքնաղը։

Ճրաքին լուսան Արաղը...

Պա հալա՜ ռազի չինի՜։